

քաղուածօրէն մէջ ենք բերում անհրաժեշտը .

«Յամի ԶԹ եւ է . երորդի թուարեութեա հայկազեան տումարի . յածապահ զղեակս Հոռմկլա , . . . : Հրամանաւ եւ ծախիւք երջանիկ հայրապետին հայոց տն Կոստանդեայ , որ զածահահաճոյ վարուց իւրոց եւ բարի անուան անհամեմատ ունէր զպատմութի . . . ի ձեռն քաջակրան քահանային Թորոսի եղբարորդոյ իւրոյ , ետ գրել զսա իմոյ անարժանութեանս Թորոսի , մականուն Ռաւլին կոչելոյ , եւ նուիրեաց զսա որդւոյ Լեոնի որդոյ շեթում թագաւորի : եւ ինքն կատարեալ զկեանս իւր , հանգեալ ի քս , կալեալ զաթոռ հայրապետութե ամս Խ եւ Ե : Որ եւ ի շնորհացն այ եւ հրամանաւ թագաւորին շեթմոյ յաջորդէ զաթոռն սբ տր Յակոր» : Յիշուած է Եգիպտացիների արշաւանքը Անտիօքի վերայ , ապա Լեոնի վերադարձը Եգիպտոսի գերութիւնից : «Եւ բազում պատուով եւ ընծայիւք եկն յաշխարհ , եւ ի հայրենի աթոռ իւր եւ եղև խաղաղութի երկրիս եւ խնդութի քրիստոնէից : Ի սոյն աւուրս եղև զրաւ գրչութե սորա զանազան նիւթաւք եւ երանգ երանգ գունաւք , առ ի սխրալի լինել որդոց սրբոյ եկեղեցոյ» :

Պնդրում է յիշել «աղաթիւք ի տր զարժանաւորսն ամենայն բարեաց յիշատակի զսբ հայրապետն զտր Կոստանդին ստացող սորա եւ զժառանգող սորին զծիրանածին մանուկն շեթում , եւ զհայր իւր Լեոն թագաժառանգ եւ զմայր իւր բարեպաշտուհի , նուիրեալ ի թագուհի հայոց , Կեռան կոչեցեալ» :

Վերջապէս խնդրում է յիշել «եւ զարիագոյն քահանայն Թորոս , որ զծախս գրոցս երկրորդեաց (զոսկի)» , գրչին , ծնողներին եւ որդիներին , ուսուցիչներին , բոլոր երախտագործներին եւ կազմողին :*

Ընծայականից եւ յիշատակարաններից երեւում է , որ աւետարանը գրուել է սկսել Կոստանդին Կաթողիկոսի կենդանութեան ժամանակ , այսինքն 1267-ի Ապրիլի 9-ից առաջ , երբ վախճանուեցաւ նա : Առաջին երեք աւետարանների գրութեան ժամանակ զեռ եւս կենդանի է նա , իսկ չորրորդի եւ ընծայականի գրութեան ժամանակ մեռած : Յիշ-

ուած է Յակոր Կաթողիկոսի ընտրութիւնը եւ յաթոռ նստիլը , որ կատարուած է 1268 թ . Փետրուարի 12-ին : Լեոնի ազատութիւնն է քիչ յետոյ :* շեթում Բ . այդ ժամանակ պէտք է հաղի 5 տարեկան լինէր :

Մանրանկարչութիւնը վերին աստիճանի նուրբ եւ ազնիւ , յատկապէս դէմքերը եւ շարժումները գեղեցիկ ձեւակերպուած , խորաններից զատ , ընծայականի հետ տասն ու չորս , ինչպէս չորս աւետարանիչների իրենց սկզբնադարձերով , կան 22 տնօրինականներ , ոմանք առանձնապատուկ երեւոյթներով . օր . Մնունդը , Յիսուս նորածինը պառկած չէ մսուրքում , ինչպէս սովորական է , այլ Մարիամի ծնկանը աթոռի վերայ նստած :

Ուշագրութեան արժանի է եւ Վերջին Դատաստանը , ոչ նման Սերաստիայի աւետարանի Վերջին Դատաստանին , ուր Թորոսի հարուստ երեւակայութիւնն է երեւում եւ բազմաթիւ խմբական պատկերներով , արտայայտութեամբ եւ շարժումներով : Այստեղ կեդրոնում նստած է Յիսուս , ձախով ծնկանը ոսկէկազմ աւետարան յենած , աջով խաչակնքում է : Երկու կողմից բարեխօս են Մարիամ եւ Յովհաննէս Մկրտիչ : Երկնքի կամարների վերայ հրեշտակների գլուխները , որոնցից աջ խմբի մէջ դրօշակակիր հրեշտակը , փողահարը , կշռողը :

Տարբարադարար լուսանկարներ չունինք ցուցադրելու :

* * *

Ահա այսչափ Զեռագիրներ յայտնի են մեզ , որոնք գրուած են Կոստանդին Կաթողիկոսի անմիջական հրամանով եւ հովանաւորութեամբ Հոռմկլայում գործող նկարիչների ձեռքով : Բայց ոչ այսչափ միայն . մեզ յայտնի է , օրինակ , շեթում Ա . ի Աւետարանը նկարագրող . Մ . Աթոռի մատենադարանում , ընտիր մագաղաթ եւ երկաթագիր , որի մի քանի թերթերը միայն մնացած են յիշատակարանի սկզբնաւորութեան հետ , թուականն ու համարը չենք յիշում : Մի յետին գրիչ կտրել է լուսանցքի զարդերը եւ կպցրել յետին դարերի աւետարանի լուսանցքներին : Այդ տեղից արտանկարել ենք տուել Յիսուսի կանգնած պատկերը նկարիչ Ֆէթվաճեանի ձեռքով մեր մանրանկարչական մեծ աշխատանքի համար :

Վոթրթաունում ապրող պ . Նազարէթ

*Ալիշան . Սիսուան 249 եւ Օրմանեան . Ազգապատում եր . 1673 :

*Այս աւետարանի մասին առաջին տեղեկութիւն տուող յիշատակարանների հետ եղել է Սրուանձտեան , Թորոս Աղբար Ա . 324-7 : Իսկ նորանից օգտուել է Մեքրոպ Եպիսկոպոս : Հանդէս Ազգ . XXIV . եր . 74 :